ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 15-րդ կետը և «Անասնաբուժության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջները և անասնաբուժասանիտարական վերահսկողության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

_____-ի N _____-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջների և դրանց անասնաբուժասանիտարական վերահսկողության հետ կապված հարաբերությունները:
2. Գյուղատնտեսական կենդանիների շուկան՝ առևտրի իրականացման վայր է, որտեղ իրականացվում է գյուղատնտեսական կենդանիների առուվաճառք:
3. Գյուղատնտեսական կենդանիների առուվաճառք կարող է իրականացվել նաև առցանց:
4. Կենդանիների վաճառքն առցանց կազմակերպելու նպատակով էլեկտրոնային տարբերակով պետք է հայտարարությանը կցված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի N 1 ձևի անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթը՝ վկայականը:
5. Գյուղատնտեսական կենդանիների շուկաները **հանդիսանում են անասնահամաճարակային նշանակության կամ անասնաբուժական**

պետական վերահսկման ենթակա օբյեկտներ: Վերջիններիս գործունեությունը կազմակերպող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պարտավոր են ծանուցել անասնաբուժության ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնին (այսուհետ՝ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին)՝ նշելով գործունեության վայրը:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Գյուղատնտեսական կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝

- կենդանիների բեռնման և բեռնաթափման հարթակով,
- առանձին դարպասներով՝ շուկայից կենդանիների մուտքի և ելքի համար,
- ապահովված լինեն լվացող, ցողարկող և ախտահանող սարքերով,
- կոյուղատար առվակներով կամ խողովակաշարերով,
- կառուցված կենցաղային հարմարություններով (էլեկտրա- և ջրամատակարարում),
- փոխադրամիջոցների անիվների ախտահանման համապատասխան հարմարություններով,
- սանիտարական հանգույցով, վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով:

7. Գյուղատնտեսական կենդանիների շուկայի տարածքը պետք է լինի ցանկապատված՝ առնվազն 1,5 մետր բարձրությամբ, այցելուների և տրանսպորտային միջոցների համար նախատեսված առանձին մուտքերով:
8. Կենդանիների համար պետք է նախատեսված լինեն կացատեղեր՝ ճաղազատված տարածքներով, ցանցավոր հատակով:
9. Շուկայի տարածքը պետք լինի հարմարավետ ջրահեռացման, մեխանիկական մաքրման, լվացման և ախտահանման աշխատանքներ իրականացնելու համար:
10. Շուկան պետք է ունենա՝

1) կենդանիների կենսական պահանջներն ապահովող միջոցներ՝ ջրախմոցներ, կերամաններ, ինչպես նաև զոոհիգենիկ պահանջներն ապահովող՝ գոմաղբի հավաքման և հեռացման հարմարանքներ,

2) ծածկ՝ տեղումներից և արևի ճառագայթներից կենդանիներին պաշտպանելու համար,

3) վարչական շինություն և անասնաբույժի սենյակ, պահեստային տարածք՝ սարքավորումներ, ախտահանիչներ, կեր պահելու համար:

11. Առևտրային օրվա ընթացքում չվաճառված կենդանիները գիշերակացը կարող են անցկացնել շուկայում։
12. Շուկայում մատուցված ծառայությունները վճարվում են կենդանիներ վաճառողի կողմից՝ համաձայն շուկայի **գործունեությունը կ**ազմակերպող սուբյեկտի կողմից սահմանված վճարի։
13. Շուկայում թույլատրվում է վաճառել կեր, կենդանիների խնամքի համար նախատեսված պարագաներ և ձիաքարշ կցորդներ։
14. Շուկաներում արգելվում է գյուղատնտեսական սննդամթերքի և արդյունաբերական ապրանքների վաճառքը։
15. Շուկայի **գործունեությունը կ**ազմակերպող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարատավոր է ունենալ անասնաբույժ՝ վաճառքի ենթակա գյուղատնտեսական կենդանիներին պարտադիր անասնաբուժական զննում իրականացնելու համար։
16. Շուկան տարածքը կարող է ապահովված լինել տեսահսկման համակարգով։

3. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

17. Կենդանիներ վաճառողը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի N 1 ձևի անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթը՝ վկայականը պարտավոր է ներկայացնել շուկայի անասնաբույժին, վերահսկողության շրջանակներում՝ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչին։
18. Կենդանիների անասնաբուժական զննման համար շուկայի մուտքի մոտ պետք է առանձնացնել հատուկ ցանկապատված տարածք և միայն անասնաբույժի ստուգումից հետո, կենդանին կարող է մուտք գործել շուկա։
19. Վաճառքի ենթակա խոշոր եղջերավոր կենդանիները պետք է ունենան անհատական նույնականացման ականաջապիտակներ։ Մյուս գյուղատնտեսական կենդանիները, որոնք չունեն ականջապիտակներ պետք է ունենան տարբերանշաններ և ենթարկվեն պարտադիր անասնաբուժական զննման։
20. Հիվանդության կասկածանքով կենդանիներ հայտնաբերելու դեպքում՝ կենդանիները մեկուսացվում են և իրականացվում է կլինիկական հետազոտություն անասնաբույժի կողմից, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ տեսուչի ցուցումով և հանձնարարությամբ։
21. Կլինիկական հետազոտության ընթացքում անասնաբույժը պարտավոր է ծանոթանալ փաստաթղթերին, գնահատել կենդանու ընդհանուր առողջական վիճակը, անհրաժեշտության դեպքում ջերմաչափել, վտանգավոր ախտանշաններ հայտնաբերելու դեպքում՝ արգելել կենդանու մուտքը շուկա և վերջինիս վերադարձնել անասնատիրոջը։
22. Շուկայի տարածքը և անասնահամաճարակային վիճակի, կանոնների ու ցուցումների պահպանումը պետք է լինի մշտական անասնաբուժական վերահսկողության ներքո՝ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից։
23. Գյուղատնտեսական կենդանիների շուկայի գործունեությունը

կասեցվում է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, երբ.

- շուկայի տարածքում վաճառվում է կենդանի՝ առանց (կամ ոչ պատշաճ լրացված) ուղեկցող N 1 անասնաբուժական վկայականի,
- սույն կարգի 6-րդ կետով սահմանված գյուղատնտեսական կենդանիների շուկաներին ներկայացվող պահանջները պահպանված չեն,
- շուկայի տարածքում ախտանշաններով կենդանիներ են հայտնաբերվում,
- սույն որոշման 14-րդ կետի դրույթի խախտման դեպքում։

24. Սույն որոշման 23-րդ կետի դրույթներով սահմանված խախտումները երկրորդ անգամ կրկնելու դեպքում՝ կիրառվում է նաև վարչական տուգանք Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։